թեամբ էր պարապում հայ դպրոցներում. նա յայտնի էր իբրև ընտիր դասատու։ Հայ դպրոցների փակումից յետոյ Միքայէլեանին պաշարեց անբուժելի վիշտ։ Այնուհետև նա պարապում էր մասնաւոր դասերով և երբեմն Թիֆլիսի ռուս և հայ լրագիրներում գրում էր հասարակական լուրջ նշանակութիւն ունեցող յօդուածներ։

Հանգուցեալը գրական յայտնի ոյժ չէր. մասպարէզի վերայ փայլող հասարակական գործիչներից չէր։ Նա պատկանում էր իւր դաւանած գաղափարներով իւր ձգտումներով և գործունէութեամբ այն համակրելի սակաւաթիւ աշխատաւոր շարքին, որոնք աւելի հեռաւոր միտումներ ունեն հայ ազգի վիճակի վերաբերմամբ։ Իբրև անհատ Միքայէլեանը վերին աստիճանի սիրելի էր այն բոլոր շրջաններում, որոնք դէթ մի անգամ տեսել էին նրան։

Թիֆլիսի ինտելիգենցիան և երիտասարդութիւնը յարգեց հանգուցեալի յիշատակն երկու բաղմամարդ հոգեհանգիստներով, որոնց ժամանակ խօսուեցին ճառեր ոչ միայն հայերի, այլ և վրացիների և ռուսների կողմից։ Շ.

ՍԻՄԷՕՆ ՀԱԽՈՒՄԵԱՆ

Անցեալ փետրուարի 14-ին Պարիզում վախճանուեցաւ յայտնի գրագէտ և հրապարակախօս Սիմէօն Հախումեանը 46 տարեկան հասակում, երկու տարուայ խելագարութիւնից յետոյ։

Հախումեանը երկար տարիներ գործել է Հայ մամուլի մէջ. նա աշխատակցել է «Մեղու Հայաստանի», «Արձագանք», «Նոր-Դար» և «Տարազ» լրագրներին, երկու անգամ փորձել է անձամբ խմբագրել հայ ամսաթերթ առաջինը՝ «Գործ» անունով Շուշում, որի միայն երկու համարը լոյս տեսաւ, իսկ վերջին տարիները՝ «Ժամանակ» Պարիզում, բայց երկուսն էլ անյաջող իրանից բոլորովին անկախ պատճառներով։

Բայց Հախումեանի արժանիքը ոչ թէ այն է, որ նա երկար տարի գործել է իբրև լրագրող և հրապարակախօս, այլ որովհետև նորա գրիչը միշտ և ամեն տեղ բուրել է մաքուր հայկական հոգի, անօրինակ և անձնուէր սէր դէպի մայրենի լեզուն, մամուլն ու գրականութիւնը, որովհետև նորա գրուածները դիւթիչ էին, անկեղծ սրտից բղխած, տպաւորիչ, սուր և ջախջախիչ։

Դժբաղդաբար նաև ենթարկուեց ընդհանուր հայ գրողների վիճակին, քանի մի տարի ապրեցաւ Պարիզում յետին կաբօտութեան մէջ, վերջին տարիներս ստացաւ հոգեկան անբուժելի հիւանդութիւն և մեռաւ տակաւին այրական հասակում, երբ նորա տաղանդը հասել էր գագաթնակէտին և խոստանում էր հայ գրականութեան առաւել լուրջ ու արդիւնաւէտ մասնակցութիւն։

Հանգիստ ոսկերաց արդիւնաւէտ հայ գործչին.

ՀԱՑ